



69. ՅՈՐԱ ԱԽՊՈՐ ՔՅՈՒՐ

Ժամանակը մարթըմ կիւնը, ուր յոթ լաճ: Ան մարթըմ էլ կը մեռնը, կը մընա կընիկ, ուր յոթ լաճ, ինքն էլ տըղով ը:

Ան լաճիւր տը յան կաճըրբութիւն, ան գախ ընչ տը յան, կըսին.
- Մարե՛, թը ախչիկ էլա՛վ, մաշկ-մաճըրակեն կախիս պատեն, թը լաճ էլա՛վ, նիտ-անեղ կախիս պատեն:

Անունք գաճին:

Փելըմ մընաց, անունց մոր ախչիկըմ էլա՛վ, ան էլ մաշկ-մաճըրակեն կախից պատեն, բըռըմ օր մընաց, անունց տըրկից բախ-լութենե իրը, մաշկ-մաճըրակեն առից տակ:

Ժամանակըմ ընցա՛վ վերա, ախչիկ ճաւճացա՛վ, ուր հասա-կին խասա՛վ, խա գեղը ախչկըտիրուն կով կը տաներ, օրըմ ախչ-կըտիրուց մեկ տըտռից:

Ան էսաց. - Իմ ախպոր արի՛վ, իս չէր:

Ան մեկէլ էսաց. - Իմ խոր արի՛վ, իս չէր:

Ան էլ էսաց. - Իմ կարմիր կովու արի՛վ, իս չէր:

Հըմեն ծըծղացին վերա, սիցին. - Տու յէր, ուր տու չէր, ապա վըրե՛ քի յոթ ախպեր կեր, տու քու ախպոր արի՛վ չէրտվցար:

Ընչ իրը տուն, էսաց. - Մարե՛, աղո՞ւ ծի յոթ ախպեր կեր:

էսաց. - Խա՛:

էսաց. - Ապա ի՞նչ էլա՛ծ:

էսաց. - Խա՛, վուրլա՛, գաճած կաճըրբութիւն:

Ախչիկ էլ էլա՛վ, ուր հողը քար տեսա՛վ, էսաց. - Տը յամ հիտի՛վ իմ ախպըրքիրուն:

Շատ գընաց, քիչ գընաց, Աստըծուն ատ ախչիկ խեղճ իրը, ուր խրիշտակ հորողկից մա՛ ատ ախչիկ, ընցա՛վ ախչըկան հիր-

ծիվ, խանքանք տալեն առից, տարավ մա վերվերը սարի՛մ:

Տարավ, հիրծիվ սարի՛մ կայնացըցուց, էսաց. - Տու նա տը-
նեն հիրուր առվիս, իս ալ քյի տերութին չըմ անը:

Ինք խանքանքով էրկինք:

Ախչիկ զընաց սարը պակ, կը խը՝ յոթ քանսա գի հանը,
հըմեն էլ ծավրով լիկ, կազիր վերա, զըտեթյորի շարուկ: Համեն
մեկից փըշու՛մ կուտը, անտե խին խըսիրըմ կիլնը, կը մըտնը մեչ,
կը մընա հատե:

Անու վից ճուչ ախպերքիր քանցեր են նեծիր: Ան պըզտիկն էլ
մընացեր էր, տանտըկնութին կաներ:

Էվարին ընչ ախպերքիր նեծրից իկին, ճուչ ախպեր պըզտիկ
ախպոր էսաց. - Նա տու իս կիրիր:

Ան էլ ան մեկէլին էսաց:

Ընցնա քալցին վար մեմեկը, մարթ վար ուր հանդ կարավ:

Մընաց, ընչ խին խըսիր պիրին, տը փըռեն, ուր նըստեն
վերա, տեսան խորոտ ախչիկըմ էլավ տու:

Ճուչ ախպեր էսաց. - Իս նա ախչիկ տ'առնին:

Ան էսաց. - Ա՛խ, անցկում մ'ը՛սը, չէ՞ իս քիւ քիւրն իմ:

Էրկու տիր կըսը. - Իս քյի տ'առնին:

Ան կըսը. - Անցկուն մ'ը՛սը, չէ՞ իս քիւ քիւրն իմ:

Նուր հալ-հավալ ուր ախպերքիրուն կը պատմը, թը անունը
ուրինց մոր ինչ սած, անունց տըրկից ինչըխ բախլութենե մաշկ-
մազրակեն պատից բիրից տակ, վուր անունը չըգեն, ուր կով էրե-
ծալ, չուր գալ, ախըր ինչ օր ընցեր էր ուր զըլխուն, կը պատմը:

Համեն օր յոթ ախպերքիր կերթեն նեծիր, ան կը մըտներ
տուն, տանտըկնութին կաներ:

Պըզտիկ ախպեր, անու անուն Միրզամահմադ կիլնը, ուր
քիւրուչ կըսը. - Մորե թորվընեն չըթըղնիս կըրակ խըլըսնը: Վուր
խըլըսնը, ալ ըստը տեղ կըրակ չըկա, վուր յանք, բիրինք:

Կըսը. - Աղեկ:

Կը մընա օրըմ, ընչ մուխիր կը խանը, կը մուռնա, ըզկըրակ-
տիրըմ էլ հըմեն կը խանը, խա մուխիրն կը տանը, կը թափը: Չուր
կընգընը միտ, կերթա մուխիր կը փըճըճը, անպա մուխըր մեջ կը-
րակ կը տատըրը, չէ՛, կըրակ չըկա: Կիլնը տուս, կիրիշկը՝ կըրակ
չըկա, կիրիշկը, կիրիշկը, ուր կը տեսնա զանեն տեղըմ պարակ
մուխըմ կիլնը:

Կառնը ուր պոռ, կերթա, կերթա կը տեսնա՝ մանրակիր պառնալըմ նըստիր մա կըրակ, աչ ծիծ թըլիր վար ճապ թիվին, ճապ ծիծ թըլիր վար աչ թիվին: Քառսուն խուրնտըարը արծիծ թալիր ուր պերան, կը ծամը:

Պառավ ընչ կը տեսնա զախչիկ, կըսը. - Վո՛ւյ, տու խազար բարով իկիր, տե՛, արը, նըստը՝ մա կըրակ, չուր իս էրթամ, ճուրըմ բիրիմ:

Ինչ պառավ կը յա ճըրին, ա՛ն շուտըմ ուր պոռ կը կըպուցը, կը փախը, խրիշտակըն էլ ալ ա՛նու տերութին չանը: Կը փախը, կը գա տու, ծեռ կը տա ուր ջոբ, կը տեսնա՝ արփըշմե կըծիք ուր ջոբ չը:

Կըսը. - Ահա, վուըլա՛, իմ կըծիք մընացիր մա ա՛ն պառվո կըրակ:

Պառավըն էլ ճըրիւց կը տառնա, կը տեսնա ախչիկ չըկա, կըսը. - Հա՛յ, հո՛յ, մա իս ինչ արը, թուշըմ էրկու ուտեր, նուր էրթեր:

Կիրիշկը, կը խը՝ ա՛տե արփըշմե կըծիքըմ կա, կը տա վար ուր ծեռաց, կը գա, վար ախչըկան տըռան կը կայնը:

Պառավ անցկում կը պոռա, կը ճըվա՝ ախչը, խուրգիս կուըրբան, մըհա տիռ բա՛ց:

Ախչիկ տիռ չըբանա:

Ախըր ինչոխ կանը, ախչիկ չըբանա, կըսը. - Մըհա քու ճըկուք մա տըռան ծերպ վե խա՛ն տու:

Ախչիկ ճըկուք կը խանը, պառավ ա՛նու ճըկուք կը տընը ուր պերան, կը ծըծը, կը ծըծը ա՛նու ճըկուք, անցկում կը հերկընցըցը, չուր ա՛նու սըրտը հիրճիվ կը յա, կը ծըծը չուր էվարին, գա՛նու ախպերքիր տը գա՛ն, կը թըղնը, կը յա:

Ախչիկն էլ ա՛նհաշ կընգըն հատե:

Հիրիկուն ախպերքիր կը գա՛ն, անցկում կը կանչին, ծեռ չի տա, շատ կը կանչին, ախչիկ կա՛կախը:

Կըսին. - Կա յե՛ մըսիր, խիվընցիր:

Ախչիկն էլ ընցած-տառցածն ա՛նուց քըսա կանը:

Կը մընա ա՛ն մեկէլ օր, ախպերքիր կերթան նեծիր, ա՛ն էլ կիլըն, ուր պա՛ն կանը, ուր պա՛նիր պըրծնիլու գախ պառավ էլըմ կը գա:

Շատ լավա կանը, կըսը՝ տիռ բա՛ց:

Ախչիկ չըբանա:

Կըսը. - Մըհա քու ճըկուք, քյի մատնիկըմ բիրիր իմ, մըտու-
ցիմ հիմը:

Շատ կը գորը, ախչիկ էլըմ ուր ճըկուք կը խանը տուս:

Պառաւ չուր հիրիկուն կը ծըծը, հիրիկուն կը թըղնը կերթա,
ախչիկն էլ կընգըն հանտե:

Կը մընա էվարին, անու ախպերքիր կը գան, շատ կը բռռան,
շատ կը ճըվան, ինչըխ վուր կանին, քուր ծեն չի տա: Գանգամ կը
մընան վար տըռան, նուր Միրգամանհմատ կըսը. «Աղուրթ ծի
պըզտիկ բանիս մեչ խա ծյի կեր»:

Նուր կը խանը, տառ կը բանան, կերթան ներս:

Կը տեսնան քուր մեռուկ գի հանտե: Նուր կը տաքցին, կը
փանթըն տե՛ տե՛, խուրդի կը գա գախչիկ:

Կը խարցընին, կըսին. - Ան ի՞նչ իլիր:

Նուր հալ-հալալ անունը քըսա կանը, կըսը՝ ընցնա էլավ,
ընցնա գընաց, իս ընցնա գացը մա պառաւ, ընցնա անգանովա:
Պառաւ ընցնա իրը վար տըռան, ընցնա արավ, ֆըլան-բեֆան:

Միրգամանհմատ կըսը. - Տու քանցե՛ք նեծիր, իս կը մընամ
տուն:

Ան մեկէլ օր ախպերքիր կերթան նեծիր, Միրգամանհմատ
տանրկախ կը բանա, կը պախկըմ տանրկախը հիտիվ: Կը մընա
սըհանթըմ էրկու, մանթակիր պառաւ կը գա, ուրախութեն կը վանը:

Կըսը. - Խալիմ մարթ չըկա, յամ ուտիմ, քանը շուտ ը:

Չուրս-խինգ գան կերթա, վիցին Միրգամանհմատ կը խասնը,
խանջարըմ կը գանը, փուր-փուր կը ծակը: Ըզպառաւ կը փըր-
տը, կանը մատ-մատ:

Պըտուղըմ արուն կը կաթը հանտե, ինչըխ կանը, պախ-
թակով կը քյիրը, արուն չըյա:

Միրգամանհմատ ուր քուրուչ կըսը. - Ըստա խամիմ կիլնը, լա
չըթըլիս թան:

Կըսը. - Չէ՛, չը՛մ թալը:

Փելըմ կը մընա, անցկում խորոտ խամիմըմ կիլնը, ախչիկըն
էլ կըսը. «Մըկա տը յամ, տուրո՛ւց խամիմ բիրիմ, վուըլա՛, իս մա
խորոտ խամըմքիր տը թալիմ թան»:

Կը քաղը, կը թալը թան, կը մընա չուր հիրիկուն ախպերքիր
կը գան, ինքըն էլ հանօր ան թան խամ չարիր:

Հիրիկուն ախպերքիր կը գան տուն, թան կը լըցը, կըսը. -
Կերե՛ք, մըհա իրիշկը, իս էլ խամ չըմ արիր:

Ծաւ ախպեր կուտը, տալ գըտել պերնեն չըր բիրըր տակ,
կը մեռնը, ան մեկէլըն էլ՝ անցկում, ան մեկէլըն էլ՝ անցկում, վից
ախպերն էլ կը մեռնին:

Կը մընա Միրգամահմատ, կըսը. - Ահա, վուըլա՛, ան խամիմ
եր՝ թալիր մա թանին:

Կը մընան երկուս մընակ, անունք էլ կիլնին, կերթան:

Շատ կերթան, քիչ կերթան, Միրգամահմատ շատ կը ծար-
վանա, տեղըմ կհամշու ուտաց տեղ կը տեսնա, հատուց ճաւր կը
թալը:

Միրգամահմատ կըսը. - Նա ճաւր տը խըմիմ:

Քաւր կըսը. - Կուըրթա՛ն, մը՛ խըմը, տ'իլնիս կհամեշ:

Շատ կերթան, քիչ կերթան, կերթան տեղըմ կը խին՝
հախըուր ը, լա հատուց ընչ ճաւր կը թալը, լըգաւ ուտաց տեղ ը:

Միրգամահմատ կըսը. - Կուըլա՛, իս մա ճաւր տը խըմիմ:

Քաւր կըսը. - Կուըրթա՛ն, մը՛ խըմը, տ'իլնիս լիգ:

Կերթան, կերթան, կերթան տեղըմ, կը խին՝ իգու ուտաց
տեղեն ճաւր կը թալը:

Ախպեր կըսը. - Նա ճաւր տը խըմիմ:

Քաւր կըսը. - Մը՛ խըմը, խըմիս՝ տ'իլնիս իգ:

Կերթան, կերթան, կովում ուտաց տեղ կը խին:

Ուըր ճաւր կը թալը, կըսը. - Քուրի՛կ, իս ծարավ իմ, մա կովու
ուտաց տեղեն ճաւր տը խըմիմ:

Քաւր կըսը. - Քաւր քի հայրան, մը՛ խըմը, խըմիս՝ տ'իլնիս
կով:

Գազան կերթան, քաշում ուտաց տեղ կը խին, էլմէլ կըսը. -
Նա ճաւր տը խըմիմ:

Քաւր կըսը. - Չէ՛, մը՛ խըմը:

Էլմէլ կերթան, մաքում ուտաց տեղ կը խին, կըսը. - Յամա՛ն,
իս ծարվո մեռա, իս մա ճաւր տը խըմիմ:

Քաւր կըսը. - Չէ՛, մը՛ խըմը:

Փըշում էլ կերթան, քաւր կընցընը, ախպեր շատ տանգաւ
կիյնը, կը խըմը, կիլնը գան: Կիլնը գան, կիյնը քաւրուչ հիտիվ,
քաւր ուր մեչկանց կը կապը վիգ, կերթա: Գազան կերթա, ըգգան
կը կապը ըգճընարը ծառ, ինք կիլնը, կը մըստը ճընարը ծառ վե:

Կը մընա, թագաւորը լաճ գուր ծին կը բիրը ճուր, ինչըս կանը, ուր ծին ճուր չըսըմը: Կիրիշկը, կը խը՝ սհուրաթըմ տը գի մա ատ ճըրուն, տես-տես կիրիշկը, կը տեսնա ախչիկըմ տը գի ճընարը ծառ վե:

Կըսը. - Դա՛յ, ախչիկ, վըրե՞ նըստիր իս ծառ վե:

Կըսը. - Ձա չէ, գի իս էլ ծի ըստա՞ իմ կընտիր:

Կըսը. - Վուըր անցկուն ը, տու կա՛ց ըստա՞, չուր իս գա՛մ: Ձին տանիմ տուն, գա՛մ:

Կերթա տուն, ըգուր խեր կը խարցընը:

Խեր կըսը. - Գընա՛, բի՛:

Ան էլ կը գա, ուր ախչիկ տանը, կըսը. - Նա՛ վի՞ գա՛ռն ը:

Կըսը. - Իմն ը:

Կըսը. - Քե՛լը յանք:

Ախչիկ կըսը. - Իս մեկ կա՛վլով կը գա՛մ, ուր իմ գա՛ռ թա՛լաֆ չանեք:

Նուր կիւնը, խա՛ թագաւորը լաճուն կը գա: Կերթան խա թագաւորը, լաճուն կը փսակին:

Կը մընա, օրըմ անու կյիսուր անու գըլոխ կը լվա, բիւշու կընիկ կը գա, կըսը. - Պընենաւե մըկա տը յաս, ծրի խաց բիրիս:

Շատ կըքվը հինը, կըսը. - Խաթո՛ւն, դե ի՛լը, գընա՛:

Ընչ կյիսուր կը յա, մըտըրբու կա՛ճեն սերը կանը, իրիք ասեղ կը գա՛նը վա՛ր թագաւորը խարսը գըլխուն, ան հա՛ կիւնը ճընճղուկ, հուրտուս վե կերթա: Մըտըրբու կա՛ճեն էլ շուտըմ ուր խա՛լաւքիր կը խանը, կը նըստը, ուր մագիր կը սանտըր:

Կյիսուր կը գա, կըսը. - Ան մըտըրբու կա՛ճեն ի՞նչ էլալ:

Կըսը. - Սեվալո՛րվը ատ մըտըրբու կա՛ճեն, գընաց:

Կյիսուր կըսը. - Նա՛ վըրե՞ քու լեշ սիվցալ:

Կըսը. - Անցկուն մընացը հիրճիվ նա սըռին, տու չիկիր:

Կըսը. - Ան վըրե՞ քու պերան քեթրալ:

Կըսը. - Անցկուն կանչիցը, չիկիր:

Կըսը. - Ան վըրե՞ քու աչքիր շըլվան:

Կըսը. - Անցկուն իրիշկիցը, տու չերեվացիր:

Կը մընա, ժանանակըմ վերա կընցընը, ան կա՛ճեն կը տեսնա ատ գա՛ռ աթա՛րգ թանգ կը շախին, կը գըտնա՛ թագաւորը խարսին ը, ատ մեկ օր կըսը. - Դորիս իմ գա՛ռ գենեցե՛ք, իս տ՛ուտիմ:

Թագավորը լաճ կըսը. - Ան վըրե՞ չուր հեռանտ օրիւ քու
գառ անցկում թանգ կը շախեր, հասօր կըսիս զենեցե՛ք:

Խըլիսուն ընչ ժամ կը գանը ժամխար, ճընճղուկըմ կը գա,
կը թառը վար ծառիմ, ժամխըրին կըսը.

Ժամխա՛ր, տու քու ժամ կը գանիս,
Դու յոթ տիւր քու Աստըված կը սիրիս,
Դու էրթաս, թագավորը լաճուն սիս,
Իմ Գառնիկ ախպեր չըգենը:

Էրկօր ճընճղուկ անթարգ կըսը, ժամխար հըրճըն օր կը մոռ-
նա, թագավորը լաճուն չըսը, չուր հար ճընճղուկ ուր սած կը
կըրկնը, նուր թագավորը լաճուն կըսը՝ հալ-քեֆաթ ընցնա՛յր:

Ան էլ կը գա, կը պաղկըվը ծառը տակ, ընչ ճընճղուկ էլմէլ
ժամխըրին քըսա կանը, կըսը. «Գընա՛, թագավորը լաճուն սա՛ իմ
Գառնիկ ախպեր չըգենը»: Թագավորը լաճ գաղտիկըմ կը յա, կը
յա, ճընճղուկ կը բըռնը: Կը տեսնա իրիք ասեղ կա վար անու
գըլխուն: Ինչ կը քեշը, ճընճղուկ կիլնը կընիկ:

Նուր թագավորը լաճ կերթա, մըտըրբու կաճեն կը կապը
ծիու պուչ, կը թըղնը սար վե:

Ինչըխ կիլնը, թագավորը կիմանա՛ ատ գառ անու ախպերն
ը, կըսը. - Իս չուր մըկա չըր գընա, թը ան գառ անու ախպերն էր,
թե չէ՛ մըկա իս շուտ գան արեր էր մարթ:

Կըսը. - Կանաչ շըվ կա, ան գանին վար ատ գառու մեչաց,
Աստըծու հրամանով տ'իլնը իսան:

Ատ շըվ կը բիրին, կը գանին վար գառու վուըտքիրուն,
վուըտքիր կիլնին իսան, կը գանին վար մեչաց, չուր մեչկ կիլնը
իսան: Կը գանին վար գըլխուն, սաղ կիլնը իսան:

Նուր թաժա անունը խարսնիս արին, կերան, խըման, ծյի,
քյի գատ չըտըվին:

